



Ծնվել է 1961թ. փետրվարի 9-ին, Արարատի շրջանի Տափերական գյուղում: Սովորել եւ ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը: Ավարտելուց հետո ընդունվել է Կրեմենչուգի քաղաքացիական ավիացիայի ուղղաթիռային ուսումնարանը: Ավարտել է Ռիգայի ավիացիոն համալսարանը: 1988թ. մասնակցել է Արցախյան ազգային-ազատագրական պայքարին, պարգևատրվել է ՀՀ «Արիության համար», ԼՂՀ «Արիության համար» մեդալներով եւ անվանական զենքով, 2002թ.՝ ԼՂՀ-ի «Մարտական խաչ» առաջին աստիճանի շքանշանով, 2006թ. «Հատուկ գունդ» մեդալով:

1990թ. դառնալով ուղղաթիռի հրամանատար՝ Ռաֆիկը օր օրի կատարելագործում էր իր գիտելիքները, վտանգի դեպքում խուճապի չէր մատնվում, անմիջապես կողմնորոշվում էր եւ արագ խուսափում վտանգից: Անցնելով Արցախյան ողջ թռիուբոհով՝ բազմիցս վտանգել է իր կյանքը, համդիպել մահվանը եւ խույս տվել նրանից:

Ռաֆիկը շատ զգայուն ու սիրող հոգի ունի: Մինչ օրս էլ հուզմունքով ու արտասովալից աչքերով է պատմում զոհված ընկերների մասին: Մինչ օրս աչքի առաջ է Ջամբուլադ

Մուրադյանի ուղղաթիռի կորուստը, երբ երկու ուղղաթիռները՝ իրենք եւ Ջամբուլադինը վերադառնում էին Շահունյանից: Ռաֆիկի ուղղաթիռը թռչում էր առջեւից: Նկատելով դեպի իրանց սուրացող հրթիռները, անմիջապես կողմնորոշվելով՝ խույս տվեց, փրկեց անձնակազմը, իսկ նրա ետեւից եկող Ջամբուլադի ուղղաթիռին մեկ հրթիռ հարվածեց...Ի՞նչ կգգար նա, երբ այրվում էր ուղղաթիռը, նրա մեջ գտնվողները, իսկ նա ոչնչով չէր կարող օգնել:

Այդ հերոսական օրերի մասին ավելի մանրամասը [այստեղ](#):